

պիտի ըսեմ թէ գուհն տեղեկութիւնն Հայրը չեաւ ,
այլ...

ԳԵՒԻՆ ՅԱՅՆԸ

2 ա' ր.:

(Գրուած կը զանգայի վարդիանս մը, ինչ նուա՛
աղի եւ կ'իյնայի)

ԱՍՏՄ ՄԻՃԳԻՆՎԻԶ



ՄԱՅՆԱՆԱԾՈՒՄՆԵՐ

ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՆՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՀԵՏ

— 0 —

Կ. Եղեանց. — Մեծն Պետրոսի յարաբերութիւնները
հայ ժողովրդին հետ — վկայութիւնք՝ Մոսկուայի դի-
ւանատանէն, Խառնախմբի Արտաքին գործոց նախարա-
րութեան դիւանատանէն զտրուած, եւ. — Ս. Բեթեղե-
ղոսի, ինչպէս (Յայրան գիտութեանց կոյսերովն
սկզբեմ իսկին) :

Պարզ է այժմէն թէ ուսն կառավարութեան
եւ հայ ազգին միջեւ հպումը, որ տեղի ունե-
ցած է ասկէ երկու դար առաջ, այդ ազգին համար
պիտի ունենայ հետեւանքներ տալու ծան-
րակիւր — Թերեւս ասելի ծանրակիւր — որքան
հպումը զոր ատենով ունեցաւ պարսկական
պետութեան հետ. ազգին ճամբուն «մէկ ան-
կրկնապարճ» է այդ, — եթէ կարելի է
դեռ այս ըստաւարութիւնը կրթորկել՝ անոր
ո՛ր յնչափ չարաչար գործածուէն յետոյ, Հրա-
տարակելով այն բոլոր վկայութիւնները զոր
կրցած է գտնել Հայոց եւ Ռուսաց այս առա-
ջին հանդիպմանը մասին, այդ վկայութիւնը
կարգաւոր վկայուով մը լուսաբանելով եւ
երկու ազգերուն յարաբերութեանց պատմու-
թիւնը հասցնելով մինչեւ. Արաստանի տիրա-
պետումը, Պ. Կ. Եղեանց Հայոց ժամանա-
կակից պատմութեան ամենէն գեղեցիկ նիւթը
ձեռք առած է :

Բարեբաղդաբար Պ. Եղեանցի վկայումը
պարզ մեկնաբանութիւնն է այն դիւանական
վկայութիւններուն որոնք գրքին հեղինակմասը
կը հաղմեն. եթէ հեղինակին յայտած իւրա-

քանչիւր իրողութիւնը ամենէն անհերքելի
ապացոյցներով ընդհանրացնելով, մարդ
դժուարաւ պիտի կարենար տարակուսանքի զգա-
ցում մը աղբիւրէլ, ա՛յնքան պատմութեան պա-
տահարները տարբորինակ են, գէթ տիկիւրը
ընթերցողին կը թողունք դատել :

Ժե. զարուն վերջին տարիներուն մէջ, եւ-
հան Վիլհելմ անուն պալատունի կաթարիտորին
(électeur palatin) արքունիքը հայազգի ար-
կածախնդիր մը կը տեսնուի իտալէլ Օրի ա-
նունով որ ինքզինքը սերած կը հռչակէ
Հայտաբաղի իշխանական մէկ գերդաստանէն,
Պատեանց գերդաստանէն. Երբեք ստուգուած
չէ թէ այդ հռչակումը ո՛ր աստիճան ճշդ է,
միայն կը տեսնուի վկայութիւնքն թէ Հա-
յաստանի մէջ իր ճամբորդութեանցը միջոցին,
Օրի ինտելլով իսկ կուտայ իր հարկեցեալ
ընտանիքին հետ ու եւ է յարաբերութիւն ա-
նեւալէ. Ինչ ալ ըլլայ իր ծագումը, ստու-
գապէս գիտնելով թէ Օրի տասերկու տարի չափ
վաճառականութիւն ըրած էր Ֆրանսայի մէջ,
թէ ինչպէս լաւ մը տարի պալատունի կաթար-
ընտրին արքունիքին մէջ ծառայելով անցու-
ցած էր. այսպէսով կրցաւ ներկայանալ այդ
իշխանին. պարզեց անոր այն ողբալի կացու-
թիւնը որուն մէջ կը գտնուէին ջրիտառներ
ժողովուրդները մարմնականներուն ձեռքով,
եւ Հայերը հտովմէական եկեղեցւոյն ծոցը
մտցնելու կարելիութիւնը ընդհամարել տուաւ.
Ի վարձատրութիւն անոնց շնորհիւր պաշա-
պանութեանն եւ օգնութեանը, պալատունի
կաթարընտրի Հայոց կողմէ պիտի ճանչցուէր
Երբեւ անոնց վեհապետը. Եւստի Վիլհելմ,
գերման միւս պղտիկ իշխաններուն պէս՝ Թա-
գաւոր ըլլալու մարմնակէն ընտրած՝ անոր
խօսքին ականջ կախեց. Պ. Եղեանց, բաւա-
կան միամտաբար, կաթարընտրին այսպիսի նը-
պատակ մը ունենալուն վրայ տարակոյտ կը
յայտնէ. «վառնի, կ'ընէ, անոր թղթերուն
մէջ չիցա բան մը որ այդպիսի դիտաւորու-
թիւն մը ցուցնէ» : Բայց ընկալն չէր արդէն
որ պահպանուած պաշտօնական գրութիւննե-
ներուն մէջ առ թաքուն գիտաւորութիւնները
կարենան յիշատակումը ըլլալ. Իսթանբուլ Օրի
պաշտօնով Հայաստան գրկուեցաւ, ուր հասաւ
1699 թ. գործան. անմիջապէս տեսաւ որ Հոռոմ
հետ միացման ծրագիրը հայ եկեղեցական իշ-
խանութեանց մօտ նպաստաւոր ընդունելու-
թիւն մը չէր կրնար գտնել, չպիտից, եւ
տա՛նէն ինք օրուան չափ Հայաստան միայն յետոյ

վերադարձաւ՝ հետը բերելով Մինաս Տիգրանս հանց վարդապետը որ ա՛լ այնուհետեւ իր հաւատարմին ընկերը եղաւ։ Այս ճամբորդութեան իբրեւ արդիւնք՝ նամակներ կը բերէր կայսր ընտրին, Պապին եւ Ջարին ուղղութեամբ, համակներ զոր անշուշտ ինքը իր ձեռքովը զըրամ էր եւ որոնց մէջ աշխուստուն՝ զերգաւտաններու տասը պետին կը յայտարարէին թէ Իսրայէլ Օրիի վրայ բացարձակ վստահութիւն ունէին եւ Հայաստանի թագը կ'առաջարկէին պալատունի կայսրընտրին Պ. Նեքանց զըսողաբար ոչ մէկ բացառութիւն չի տար այդ անձնաւորութեանց ի՛նչպիսի մարդիկ ըլլալուն եւ ո՛ր աստիճանի իրական կարեւորութիւն ունենալուն վրայ։

Նոնան Վիլհէլմ վհատած չ'երեւար Իսրայէլ Օրիի ճամբորդութեան յառաջ բերած այս զուգնաբան արդիւնքէն։ 1699ի սեպտեմբերին իր պատուիրակէն կ'ընդունէր լիակատար յատակագիր մը Հայաստանի միջամտութեան (գրութիւն Ը․) եւ ստիպուած ենք կարծելու թէ այդ յատակագիրն հետագը ընծայեց, քանի որ անմիջապէս իրեն պարտք համարեցաւ զայն գործադրուի սկսիլ։ Հոննորս արեւելքնեբնէն մինչեւ Հայաստան երթալու համար պէտք էր Աւստրիայէն եւ Ռուսաստանէն անցնիլ կայսրընտրի Իսրայէլ Օրիի զրկեց Ջարին, Վիեննայի ճամբով։

Օրի հառաւ ուրբան Ռուսիոյ արքունիքը, ալլ եւս ոչ թէ իբրեւ անձանօթ բաղդախնդիր մը, ալլ գերման վեհապետի մը իբրեւ պաշտօնական ներկայացուցիչը։ Իսկոյն ըստական լաւ ընդունելութիւն գտաւ եւ—կարեւոր ըսն՝ մարդու մը համար որ գրամական քիչ միջոց ունէր կամ բնաւ չունէր—այնտեղ անցուցած ամբողջ ժամանակը իր բոլոր ծախքերուն դրամը ըստացաւ։ Դոս գործը կը սկսի լրջմանալ եւ Օրի, որուն քով ոչ խելք կը պակսէր ոչ ալ քաղաքագիտական հասկացողութիւն, այդ բանը ըմբռնած ըլլալ կ'երեւայ։ Շարունակելով հանդիման կայսրընտրին ներկայացուցիչ տիտղոսին վրայ կըթնիլ, ջնախուկելլէ Մեծն Պետրոսը եւ իր խորհրդականները համոզել թէ ստիպողապէս կարեւոր էր միջամտել ի Հայաստան եւ թէ մանաւանդ վերջին ծայր դիւրութեամբ կարելի է առջաւանք մը գործել Պարսկաստանին պատկանող հայկական նահանգներուն մէջ, Ալզ միջոցին, պալատունի կայսրընտրի, Մպանիոյ յայրորդութեան գործերուն մէջ ըսնուած, սաս-

տիկ նեղութիւն կը քաշէր իր ժառանգական երկիրները պահպանելու համարեւ չէր կրնար նոր թագ մին ալ զուգը անըքնելու մտածել։ Իսրայէլ Օրի ստիպուեցաւ Երեմի թողորովին Մեծն Պետրոսի կողմը դառնալ։

Այս անգամ իր գործունեութիւնը յաջողութեան հասնակալութիւններ ունէր։ Մեծն Պետրոսի պետութիւնը իրապէս սահմանակից էր Պարսկաստանին։ Կարելի էր գերաւ բաւնակ մը զրկել հոն։ Միւս կողմէ Ռուսիոյ երթաւարդ փաստաբարութիւնները աւելի գերաւ կրնային իրենց գոհացում գտնել Արեւելքի կողմնաշուռած թագաւորութիւններուն դէմ քան թէ Արեւմտեան եւրոպայի վաղեմի պետութեանց վրայ։ Ռուս կառավարութիւնը մեծ կարեւորութիւն տուաւ այն բոլոր խօսքերուն որով Իսրայէլ Օրի—չառ իրաւամբ—կըցուցընէր պարսկական իշխանութեան խաթանաւորութիւնը կողմնորէ նահանգներուն մէջ։ Կրտստարակուած գրութիւններուն շտաբէն կը տեսնուի թէ ի՛նչպէս Ռուսերը Օրիին ճշդիլ տուին իր բոլոր բացառութիւնները ու բոլոր ծրար գիրները— առջի վայելիքանէն, ոռւս կոտաւորութիւնը յայտնապէս այդ գործին տեղ մը յատկացուց որպէսզի պատե՛ն ժամանակին զայն ձեռք առնէ։

Բայց այդ ժամանակը չէր եկած, Մեծն Պետրոս այն միջոցին զբաղած էր Շուէտի հետ իր պատերազմովը, եւ չէր ուզեր ուրիշ տեղ բան մը սկսիլ՝ այդ կողմէն իր նպատակին հասնելէ առաջ, Իսրայէլ Օրիի բանակցութիւնները չէին կրնար ուրեմն անմիջապէս արդիւնք մը յանդիլ։ Այսու հանդիմ իր ժամանակը նորին բոլորովին չէր կործնցներ. տակաւ առ տակաւ ոռւս կառավարութեան վստահութիւնը կը շանէր եւ կը յաջողէր ինքզինքը Ջարին ճանչցնելու։ 1703ին Մեծն Պետրոսի բարեացակամութեան խնդրեց եւ ընդունեցաւ գնդապետի տիտղոսը։ Միեւնոյն ատեն, ըստ որում ժամանակահատուր իրերով Ռուսիոյ մէջ ընկելք բան մը չկար, չոր ծրարներ մը կազմեց ուգեց որ զինքը իբրեւ գնապան գրկէն Պարսից Շահին մօտ, Ասոր համար Ուլուպա վերադարձաւ 1704ին։ Պալատունի կայսրընտրի յօժարակամ տուաւ իրեն ազգաբարձր մը Շահին ուղղութեամբ՝ այն կեղծ քմանց մասին զոր կը կրէին անոր քրիստոնեայ հպատակները։ Բայց Օրի ոչինչ կրցաւ խել լէռելու կայսրէն։ Մոսկուա դարձաւ 1706ին՝ այս նոր ձեռնարկութեան պատրաստութիւնը ա-

ւարակելու համար, Հաւաքեց բաւական բազմաթիւ հետեւախումբ մը՝ ամէն երկրէ մարդոցմէ կազմուած—ի միջի աշխոյ Հոյանտացի զիտնական Յոաքիմ Շոէօտէրը որ կ'ուզէր Պարսկաստան երթալ արեւելեան լեզուները ու ստեփանսիբել—, եւ ձեռքը ունենալով Ջարին մէկ յանձնարարադրելու Շահին ուղղուած, Պարսկաստան մեկնեցաւ 1707ին իբրեւ «Պապին պատուիրակ» կամ մանաւանդ ինքզինքը այդպէս ներկայացնելով, Պ. Շեքանց Վատիկանէն քաղուած ո եւ է գրութիւն չի նշանակեր որ այս անակնկալ տխուր աղաղակացն է:

Իսրայէլ Օրիի փամանու մը Պարսկաստանի մէջ շատ ծանրակշիռ տպաւորութիւն մը յառաջ բերաւ, Յիսուսեանի մը պատմածին նայելով, որ այդ միջոցին հոն իբր միախնար զրկուած էր եւ որ Պարսկաստանի մէջ անցած դարձած ին վրայ տեղիկազորութիւն մը հեղինակած է, Շահին կառավարութիւնը սարսափեցաւ. թէ պէտեւ Ջարին կողմէ պաշտօնապէս զրկուած չէր Օրի, այդ վեհապետին անունը շատ բարձր կը հնչեցնէր. առիթ չէր փախցնել միանգամայն իր իշխանական ծագմանը վրայ խօսելու համար. իր անունին լատիներէն տառերը, *Israël Ori*, տեղափոխելով *Il sera roi* խօսքը կը ձեւանար, Շահին կառավարութիւնը մտածեց թէ ձեռք առնուելիք ամենին խոհմ միջոցն էր այդ ահարկու անձնաւորութեան լաւ ընդունելութիւն մը ընել. բաւական երկայն ատեն մնալէ յետոյ, Օրի մեկնեցաւ Պարսկաստանէն, թէեւ ճշդիւ չէրք դիտեր թէ ի՞նչ կըցաւ ընել այնտեղ. իր պատուիրակութիւնը ուղղակի մեծ արդիւնքներ տուած ըլլալ չի թուիր. բայց ամենակարեւոր անուղղակի արդիւնք մը ունեցաւ. այն սարսափը զոր Շահին կառավարութիւնը զգաց Օրիի պատուիրակ զրկուելովը բաւական եղաւ այդ կառավարութեան ծայրափոյն տկարութիւնը ամենապայծառ կեդրով երեւան հանելու, եւ քիչ յետոյ լուրջ ապստամբութիւն մը ծագեցաւ, Խարաշէ Օրի ճիշդ դատողութիւն մը ունեցած էր ուրիմ երբ հայտած էր թէ Պարսկաստանը ալլեւս զիմպարութեան ո եւ է ուժ չունէր. այդ էր որ ռուս կառավարութեան համար կարեւոր էր դիտնալ, եւ այդ տեղեկութիւնը պարսպը չգնաց. բայց Օրի բաղդ չունեցաւ իր ճիշդութունը պտուղը վայելելու. Պարսկաստանէն դարձին մեռաւ Ատորախանի մէջ 1711ի օգոստոս ամսին եւ թաղուեցաւ. Հայոց եկեղեցւոյն մէջ հայկական ծխով, Ոչ մէկ արդիւնք ձեռք

ձգած ըլլալու ձեւն ունէր. իր ետին կը թողուր անվճար մնացած հետեւախումբի մը բեկ կորները որոնք տեղական ռուս պաշտօնատարներուն չարակամութեանը դէմ մաքառելու ստիպուեցան, իրականութիւնը այն է որ ռուս կառավարութիւնը ուշադրութիւն դարձուցած էր Պարսկաստանի եւ հայկական խնդրոյն վրայ. Օրիի գործածած միջոցները կրնան երբեմն չփոխեցնող ու գրեթէ միշտ արտառոց երեւնալ. սակայն կարելի չէ ուրանալ որ այդ մարդը, միմիայն իր ճարպիկութեամբը, նախազգիշը եղած է Ռուսիոյ յառաջխաղացութեանը դէպ ի Կովկաս եւ Պարսկաստան. արտաքոյ կարգի է այն զերը զոր յաջողած է կատարել միմիայն իր անձնական ուշիտութեամբն ու ճարտարութեամբը. մեռնելէ առաջ՝ կըցած էր ճանչցնել ռուս կառավարութեան սա երկու էական բաները, նախ՝ Պարսկաստանի ծայրայեղ տկարութիւնը եւ երկրորդ՝ սա իրողութիւնը թէ Հայերը, մասնաւորապէս Ղարաբաղցիները, կը սպասէին եւրոպական միջամտութեան մը որ կարենար իրենց կառավարութիւնը բարուքել եւ թէ արդիւնաւոր օգնութիւն մը պատրաստ էին հանցնել աւտոր. այլեւս ուրիշ բան չէր մնար բայց եւ թէ հետեւութիւնները հանել այս տեղեկութիւններէն:

Մինաս վարդապետը շարունակեց Օրիի սկըսած. պատուիրակութեան գործերուն հաշիւները մաքրելէ յետոյ—ինչ որ բաւական դժուար եղաւ,—Պարսկաստան մեկնեցաւ տեղեկութիւններ հաւաքելու համար եւ իբր միջնորդ ծառայեց ռուս կառավարութեան եւ Հայերուն միջեւ. Անգամ մը որ Նիսիստի հայտութիւնը կնքուեցաւ 1821ի օգոստոսին, Մեծն Պետրոս պատրաստուեցաւ միջամտելու Պարսկաստանի մէջ. իրենց կողմէն՝ Վրացիներն ու Հայերն ալ ոտքի ելան. 1722ի օգոստոսին Ռուսները Տէրպէնտը առին. բայց սպասուած ռազմամըս թիւքները չհասան. Ջարը Ատորախան դարձաւ եւ վրական ու հայկական ուժերը, մահա ժողովաներու վրէժխնդրութիւնէն խուսափելու համար, ցրուելէն ու պահուրտելէն ուրիշ միջոց չգտան. Սակայն Պետրոս իր արշաւանքը կը շարունակէր զբաւելու համար Կասպից ծովուն ափունքները որոնց իրօք ալ յաջողեցաւ տէր դառնալ 1724ին, Պարսկաստանի եւ Տաճկաստանի նոտ մէկ քանի բանակցութիւններէ յետոյ:

Բնականաբար այս բոլոր զէպքերը ուրիշ արգիւնք չէին աւելեցած բայց եթէ Հայոց կազմութիւնը ունիլի վատթարացնէր, Պարսիկները կ'ամբաստանէին զանոնք—եւ իրաւունք ունէին—թէ պատճառ եղած էին Ռուսերուն իրենց կողմը ուղղուելուն եւ զանոնք առաւել քան երբեք կը հարստապարէին. կացութիւնը այնքան անհանգուրժելի դարձաւ որ մաս մը Հայեր Տաճկաստան գաղթեցին: Քրիստոնէայ ազգաբնակութիւնները թախանձանքով կր խնդրէին ու կը սպաւէին Ջարին պաշտպանութիւնը բայց առաւ կառավարութիւնը զիտէ թէ միշտ հարստապարուած ժողովուրդները այդ պատճառով իսկ միշտ պատրաստ են իրենց շնորհուած պաշտպանութիւնը սիրով ընդունելու, ու հետեւաբար միայն այն վայրկեանին կը գործէ երբ պարագաները միջամտութիւնը դիւրին կամ իր ռեպուտացիան չանհետնէ տեսալէտով հարկաւոր կը դարձնեն: Զձարիտ մը Մեծն Պետրոս յայտարարեց թէ Հայերը իր պաշտպանութեանը տակն առած է—Պ. Ե. զեանց այդ խօսքը իր գրքին նշանաբան է ըրած, —եւ թէ քրիստոնէայ ժողովուրդի մը համար անհնարին էր Քրիստոնէից պատպանութեանէն հրաժարիլ: Բայց իրականապէս ոչինչ կատարուեցաւ, կամ գոնէ ոչինչ որ որ լուրջ կերպով մը Ռուսիոյ ուժերը այդ նպատակին ծառայողութեանը ըլլալ:

Ջարը ուրիշ բան չգտաւ. ընկիւն է նպատակ Հայոց բայց եթէ առաջարկել անոնց որ զան հաստատուն կասպից ծովուն իր նոր տիրած ափունքներուն վրայ, որոնք գիտենք թէ ո'րքան քիչ հիւրընկալ են, եւ ինքեք իրեն օգտակար կը թուէր այդ տեղուանքը գտնուող մահմադական ազգաբնակչութեան վրայ աւելցընել կարեւոր քրիստոնէայ տարր մը: Բնականաբար Հայերը միտքեցին Ղարաբաղի հովիտները եւ Արարատի դաշտին ովախները ձգելով Մազնիստիան երթալ հաստատուելու առաջարկութիւնը Մեծն Պետրոսի մահը 1725ի յուճուարին կուգար արդէն երկայն ժամանակամիջոցի մը համար ընդհատել Ռուսիոյ քաղաքական գործունէութիւնը զէպ ի այդ կողմերը:

Ասոնք են, շատ համառօտաբար պատմուած, այն իրողութիւնները որոնց ընդլայնումին կարող կ'ըլլանք մանրամասնորէն հետեւիլ շնորհիւ Պ. Եզեանցի հրատարակած վկայութիւններուն: Ինչ որ ալ մտածենք հեղինակին եզրակացութեանց պաշտօնական լաւաւ

տեսութեանը մասին, պարտաւոր ենք իրեն շնորհակալ ըլլալ որ այդ հրատարակութեամբ Իսթրաբլէ Որիկի այնքան հետաքրքրաշարժ անձնատուրութիւնը մեզի ճանչցուցած եւ մանաւանդ մեզի միջոցները հայթայթած է Հայաստանի գործերուն մէջ՝ իր միջամտութեան սկզբնատուրութեան վայրկեանէն իսկ՝ ուսու կառավարութեան քաղաքականութիւնը զնախատելու:

Ա. Մէճեհէ

Բարեկ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

—o—

Խաղաղութեան Համաժողովը վերջանալու մօտ է, եւ իրաւաբարութեան Ատեանին հաստատուել,—այդ ժողովին միակ աղբիւնքը—կատարած իրողութիւն մըն է արդէն: Վայրկեան մը Լա Հէի պատգամաւորները այնքան խանդավառուած էին այդ միջազգային դատարանի զաղափարով, որ մինչեւ անգամ գրեթէ միաձայն հաւանութեամբ որոշելու վրայ էին բազմաթիւ պարագաներ որոնց մէջ այդ դատարանին զիմեք պարտաւորիլ պիտի ըլլար պատերազմի ելլել ուղղվ պետութեանց համար, առով Ատեանը զբական, իրական, անմիջական գեր խաղաղող Հաստատութիւն մը կը դառնար: Բայց պատահեցաւ ինչ որ կը գուշակուէր. վերջին պահուն, Գերմանիա գործը խանդարեց. Վիլհելմ մերժեց ընդունիլ «պարտաւորչութիւնը», որ իր աստուածային իրաւունքի վրայ հաստատուած վեհապետական ամենակարողութեանը կը զպչէր. բնականաբար, Սուլթանը Վիլհելմին ձայնակցեցաւ. եւ քիչ մնաց իրաւաբարական տատնող ամբողջութեամբ ջուրը պիտի իյնար, Վիլհելմ-Համիտ խոշորագոյն պատճառով... Բայց Գերմանացիք ա'յնքան զիրենք միայնակ զգացին Համաժողովին մէջ իբրեւ իրաւաբարութեան թշնամի, (միայնակէն ալ գէշ, քանի որ իրենց հետ ունէին Տաճիկը), որ վերջ ի վերջոյ, վերապահումնեալ վրայ պնդելով հանդիմարողապէս համաձայնեցան Ատեանին հաստա-